***Արձանագրություն N 2***

***«ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի***

Գ. Գառնի 19.07.2021թ.
11:00

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝
Մ. Պետրոսյան
Գ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Ասատրյան

***1.Տեղեկություն հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ:***

1.1 «ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 12:00-ին (08.07.2021թ.), ՀՀ Կոտայքի մարզ ,գյուղ Գառնի ,Շահումյան 4 հասցեում : «ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները:

| հհ | Մասնակիցների անվանումները | Էլ.-փոստ | հասցե |
|---|---|---|---|
| 1 | «Գրիտիգ» ՍՊԸ | gritig@inbox.ru | Արարատի մարզ., գ. Ոստան, Թեհլերյան 14 |
| 2 | «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | ekspertizaproektov@mail.ru | Կոմիտաս 54 բ. |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**2. «ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմված լինելու մասին:**

2.1 Մասնակիցների հայտ պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերով սահմանված կարգի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

2.2 Մասնակիցների հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

2.3 Մասնակիցների հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**3. Տեղեկություն՝ հրավերով սահմանված Գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:**

**3.1** Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված Գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ստացվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**3.2** «ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն ստացվել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**4. Տվյալներ «ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտեր ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:**

4.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

| Հ/Հ | Գնման Առարկան | Նախահաշվային և պլանավորված Գինը | Մասնակցի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի ճանապարհային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | 792 048 | «Գրիտիգ» ՍՊԸ | 600000 | 0 | 600000 |
| | | | «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | 835000 | 167000 | 1002000 |
| 2 | ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի ճանապարհների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | 1 538 760 | «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | 500000 | 100000 | 600000 |
| | | | «Գրիտիգ» ՍՊԸ | 1500000 | 0 | 1500000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

4.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը / հայտերով ներկայացրած գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

4.3 Քանի որ «ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի հանձնաժողովը որոշեց մասնակիցներ «Գրիտիգ» ՍՊԸ-ին և «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին հրավիրել գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցությունների համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի: Բանակցությունների նիստը տեղի կունենա 16.07.2021թ.-ին ժամը 11:00-ին , ՀՀ Կոտայքի մարզ ,գյուղ Գառնի ,Շահումյան 4 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**5. *« ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով ընթացակարգի գնային առաջարկի շուրջ բանակցությունների անցկացման մասին***

5.1 Գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցություններին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցմամբ հրավիրված էին մասնակցելու՝ «Գրիտիգ» ՍՊԸ-ն և «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

5.2 Գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցությունների անցկացման նիստին «Գրիտիգ» ՍՊԸ-ն և «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն չներկայացան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

5.3 Հանձնաժողովը որոշեց «Գրիտիգ» ՍՊԸ-ի և «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի գնային առաջարկները թողնել անփոփոխ:
**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

## 6.Տվյալներ « ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման վերաբերյալ:

6.1 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Գրիտիգ» ՍՊԸ-ին, իսկ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին,որպես բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:
**Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ -0**

## 7. « ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

7.1 «ԳՀ-ԳՀԾՁԲ-21/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման տեքստը:
**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

7.2 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

7.3 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման ապահովումը (կնքվող պայմանագրի գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով) և պայմանագրի ապահովումը (կնքվելիք պայմանագրի ընդհանուր արժեի 10 (տասը) տոկոսի չափով)՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով /ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում փոխարինելով երաշխիքով կամ կանխիկ փողով/, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:
**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | Վ. Մարտիրոսյան | |
| Անդամներ՝ | Մ. Պետրոսյան | |
| | Գ. Մարտիրոսյան | |
| Քարտուղար՝ | Ռ. Ասատրյան | |